

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներքին աուդիտի ծառայությունների մատուցման հիմք է հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի (այսուհետ՝ Համայնք) և «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2024 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԾԾԲ-76/24 ծածկագրով պայմանագիրը: Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունն ընդգրկում է 2024 թվականի ընթացքում իրականացված աշխատանքները:

Համայնքի ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունն ուղղված է ներկայացվելու ղեկավարին, որում ամփոփված են ներքին աուդիտի պարտականություններ կատարող «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները: Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություն ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև և բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները: Եթե կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև առկա են շեղումներ, ապա, պարզելով այդ շեղումների պատճառները, հարկավոր է որոշում կայացնել ներքին աուդիտի ռազմավարական ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Համայնքի ներքին աուդիտի 2024 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմվել է՝ հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված 2-րդ մասի 3-րդ կետի և 12-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 69-րդ և 70-րդ գլուխների պահանջները:

Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ «Ներածություն», «Համայնքի ներքին հսկողության գործընթացները», «Ներքին աուդիտի ծառայության կատարողականը», «Ամփոփագիր», «Եզրակացություն»: Սույն հաշվետվության բաղկացուցիչ մասը կազմող «Ամփոփագրում» և «Եզրակացությունում» ներառվում են տարեկան հաշվետվության ամփոփ նկարագիրը, ինչպես նաև բաժնի պահանջմունքները և զարգացման միտումները: Վերջինս ներկայացվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին):

Հաշվետվությունը նպատակ ունի ամփոփ ներկայացնելու 2024 թվականի ընթացքում «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից աուդիտի ենթարկված միավորների և ոլորտների նկարագրությունը, կատարված առաջադրանքների եզրակացությունները և ներկայացված առաջարկությունները, դրանց արդյունքում համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված և կատարման ընթացքում գտնվող աշխատանքները և շտկումները:

Հաշվետվությունը հնարավորություն է ընձեռում կատարել համեմատություն աուդիտի ծառայության կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև, բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց առաջացման պատճառները:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Ներքին աուդիտի ծառայության կողմից իրականացվել է Համայնքի ընդհանուր հսկողության միջավայրի և աուդիտի ենթակա միավորներում ներքին հսկողության գործընթացների նախագծման և ամբողջական ներդրման արդյունավետության, ինչպես նաև արդեն ներդրված ներքին հսկողության գործընթացների աշխատանքների արդյունավետության գնահատում:

2024 թվականի ընթացքում պլանավորված աուդիտորի փոփոխություն տեղի չի ունեցել և աուդիտորական առաջադրանքներն իրականացվել են «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի ներքին աուդիտի կազմակերպության ղեկավար՝ Զարգանդ Խաչատրյանի, ներքին աուդիտորներ՝ Գագիկ Հովհաննիսյանի և Սիմոն Աբրահամյանի կողմից:

Իրականացված աուդիտի ընթացքում ուսումնասիրվել են միավորներում ներդրված և հսկողական համակարգերի արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ աուդիտի ենթարկված բոլոր միավորներում գործում են հսկողական համակարգեր, որոնք սահմանված են ներքին կանոնակարգերով, պաշտոնի անձնագրերով, ղեկավարության հրամաններով և կարգադրություններով հաստատված ներքին կանոններով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներով:

2024 թվականի աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված հաշվետվություններով ներկայացվել են մի շարք առաջարկություններ, որոնք վերաբերում են բացահայտված թերությունների և դրանց շտկմանը, կրկնվելու հավանականության բացառմանը:

Համայնքի ներքին հսկողության գործընթացները ներառում են Համայնքի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, ենթակա կազմակերպությունները, ծրագրերը և գործընթացները, որոնք թվով 22-ն են, որից 2024 թվականի ընթացքում ընդգրկվել են թվով 8 միավորները, մանրամասն ներկայացված է աղյուսակ 1-ում:

2024թ.

N	Աուդիտի ենթակա միավորի անվանում	Աուդիտի ենթակա ժամանակահատվածը	Աուդիտորների թիվը
1.	Ապարան համայնքի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ	2022-2023թթ.	3
2.	Ապարան համայնքի Արագածի ԼիաՏեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ	2022-2023թթ.	3
3.	Ապարան համայնքի Քուչակի Միհրդատ Ասատրյանի անվան մանկապատանեական դպրոց ՀՈԱԿ	2022-2023թթ.	3
4.	Ապարան համայնքի Հարթավանի մանկապարտեզ ՀՈԱԿ	2022-2023թթ.	3
5.	Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն ՀՈԱԿ	2021-2023թթ.	3
6.	Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ	2021-2023թթ.	3
7.	Ապարան համայնքի Քուչակի բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ	2021-2023թթ.	3
8.	Ապարան համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին	2022-2023թթ.	3

Վերը նշված միավորներում հնարավոր ռիսկերի բացահայտման և ներքին հսկողության համակարգերի գնահատման նպատակով իրականացվել է համապատասխանության և կատարողականի աուդիտ (աուդիտի ենթարկվող ժամանակահատված՝ 2021-2023թթ.):

Ներքին աուդիտի առաջադրանքների իրականացման շրջանակներում կազմվել են թվով 8 նախնական և վերջնական հաշվետվություններ: Ներկայացված հաշվետվություններով արձանագրվել են որոշ շեղումներ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ աուդիտի ենթակա միավորների կողմից մասամբ չեն պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջները, բացի այդ աուդիտի ենթակա միավորների կողմից մասամբ չեն պահպանվել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ, ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի N 42-Ն հրամաններով սահմանված պահանջները:

Աուդիտի առաջադրանքների իրականացման ընթացքում արձանագրված շտկման ենթակա հնարավոր բոլոր թերությունները և անհամապատասխանությունները շտկվել են, իսկ մնացած թերությունների և անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ներկայացվել է թվով 36 առաջարկություններ: Աուդիտի խմբի կողմից գործողությունների ծրագիր չի սահմանվել, քանի որ հաշվետվությամբ արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները հնարավոր է բացառել արդեն իսկ 2025 թվականի գործունեության իրականացման ընթացքում:

2. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Համայնքի և «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԷԱԾԾՁԲ-76/24 պայմանագրով սահմանված պահանջները իրականացվել են լիարժեք և շեղումներ չեն արձանագրվել: Տարվա ընթացքում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի 93-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան աուդիտի ենթակա միավորներից հավաքագրվել և վերլուծվել են ռիսկերի գնահատման

տեղեկագրերը, ռիսկերի գնահատման ընթացքում կիրառվել են թվով 5 ռիսկի չափորոշիչներ և դրանց տրվել են ուղղիչ գործակիցներ, ինչի հիման վրա կազմվել և հաստատվել են Համայնքի 2025-2027 թվականների ռազմավարական և 2025 թվականի տարեկան ծրագրերը:

Համայնքի 2024 թվականի տարեկան ծրագրով պլանավորված աուդիտորական առաջադրանքները իրականացնվել են ամբողջ ծավալով և առանց շեղումների, մանրամասն տես՝ աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2.

№	Աուդիտի ենթակա միավոր կամ գործընթաց	Աուդիտի տեսակ	Պլանավորված օրեր (աշխատանքային օր)	Գործընթացի հակիրճ նկարագիր	Պաշտոն, կցված աշխատակից
1	Ապարան համայնքի Կոմունալ Ծառայություն ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	7 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան
2	Ապարան համայնքի Արագածի ԼիաՏեր Ղևոնդյանի անվան մանկապարտեզ ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	4 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան, գլխավոր աուդիտորներ՝ Սիմոն Աբրահամյան և Գագիկ Հովհաննիսյան
3	Ապարան համայնքի Քույզակի Միհրդատ Ասատրյանի անվան մանկապատանեական դպրոց ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	3 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան
4	Ապարան համայնքի Հարթավանի մանկապարտեզ ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	3 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան
5	Ապարան համայնքի Արագածի առողջության կենտրոն ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	5 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան, գլխավոր աուդիտոր՝ Գագիկ Հովհաննիսյան
6	Ապարան համայնքի Շենավանի բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	4 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան, գլխավոր աուդիտոր՝ Գագիկ Հովհաննիսյան
7.	Ապարան համայնքի Քույզակի բժշկական ամբուլատորիա ՀՈԱԿ	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	4 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում և	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան, գլխավոր աուդիտոր՝ Գագիկ Հովհաննիսյան

8.	Ապարան համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժին	Համապատասխանության և կատարողականի աուդիտ	10 օր	Կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման ընթացքում հնարավոր ոչիսկերի բացահայտում, գնահատում և հսկողություն:	Ներքին աուդիտի ծառայության ղեկավար՝ Զ.Խաչատրյան, գլխավոր աուդիտորներ՝ Սիմոն Աբրահամյան և Գագիկ Հովհաննիսյան
----	--	--	-------	---	--


Վերոգրյալ աղյուսակի վերլուծությունները ցույց են տալիս, որ Համայնքի ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագրով հաստատված թվով 8 աուդիտորական առաջադրանքները իրականացվել են տարեկան ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան և տարեկան ծրագրով սահմանված յուրաքանչյուր աուդիտորական առաջադրանք իրականացվել է ըստ առանձին ժամանակացույցի:

Հարկ է նշել, որ աուդիտորական առաջադրանքների իրականացմանը ընդգրկվել են թվով 3 աուդիտորներ, որոնք որակավորված և ընդգրկված են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում: Իսկ ներքին աուդիտորների վերապատրաստումները՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 516-Ն հրամանի, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը որակավորում ստացած ներքին աուդիտորների հաջորդ վերապատրաստման տարին է համարվում 2025 թվականը: Վերապատրաստման հայտը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն մինչև 2025 թվականի մարտի 1-ը:

2.2 ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ ԾԱԽՍՎԱԾ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Սրորև գրաֆիկով ներկայացվում է աուդիտորական առաջադրանքի փուլերը (հիմք՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանի զլուխ 39՝ ՈՒՑ 3200՝ Գծապատկեր 1).

Գծապատկեր 1



Համայնքի յուրաքանչյուր աուդիտորական առաջադրանք իրականացվել է պլանավորված և հաստատված աուդիտի աշխատանքային ծրագրի հիման վրա, այսինքն աուդիտորական առաջադրանքների ճիշտ պլանավորման և իրականացման համար հիմք է ընդունվել աուդիտի աշխատանքային ծրագիրը:

Գրաֆիկով ներկայացված է առաջադրանքի պլանավորման (ՓՈՒԼ 1) և առաջադրանքի իրականացման (ՓՈՒԼ 2) փուլերը: Հաշվետվությունների պատրաստումը (ՓՈՒԼ 3) իր մեջ ներառում է հետևյալ գործընթացները՝ նախնական հաշվետվության կազմումը, աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի կողմից ներկայացված դիտողությունները և առաջարկությունները, վերջինիս հետ դրանց վերաբերյալ աուդիտորական խմբի կողմից քննարկում, այնուհետև վերջնական հաշվետվության կազմում: Վերստուգման գործընթացի (ՓՈՒԼ 4) համար ներքին աուդիտի իրականացման արդյունքներով կազմված գործողությունների ծրագրի հիման վրա Համայնքի ղեկավարի հրամանով կամ կարգադրությամբ հաստատվում են այն միջոցառումները, որոնք իրականացվում են ներքին աուդիտի առաջադրանքի ընթացքում բացահայտված խախտումների շտկման նպատակով: Վերստուգման գործընթացը հանդիսանում է առաջադրանքի իրականացման աշխատանքների վերջնական փուլը:

Ներքին աուդիտորների կողմից 2024 թվականի սեպտեմբերի 10-ից նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում փաստացի ծախսվել են հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝

Գրաֆիկով ներկայացված (ՓՈՒԼ 1)-ի և (ՓՈՒԼ 2)-ի համար փաստացի ծախսել է 11 աշխատանքային օր կամ 88 ժամ,

Գրաֆիկով ներկայացված (ՓՈՒԼ 3)-ի համար փաստացի 40 աշխատանքային օր կամ 320 ժամ,

Գրաֆիկով ներկայացված (ՓՈՒԼ 4)-ի համար փաստացի ժամանակ չի ծախսվել, քանի որ գործողությունների ծրագիր 2024 թվականի համար չի սահմանվել:

2.3 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է նշել, որ «ՊՐՈՖ ԱՌԴԴՏ» ՍՊԸ-ի կողմից «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով և Համայնքի հետ կնքված պայմանագրով սահմանված պահանջները չեն խախտվել:

2.4 ԱՌԴԴՏԻ ԵՆԹԱՐԿՎՈՂ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՐԱՑՎԱԾ ՍՏՈՒԳԱԹԵՐԹՈՎ ՏՐՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Ըստ աուդիտի միավորների ղեկավարների կողմից լրացված աուդիտորական առաջադրանքների իրականացման որակի ստուգաթերթերի՝ բաժնի աուդիտորների գործունեությունը գնահատվել է աուդիտի ստանդարտներին համապատասխան, իսկ միջին գնահատականը կազմել է գերազանց (4,0):

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ներքին աուդիտի առաջադրանքների իրականացման շրջանակներում կազմվել են թվով 8 նախնական և վերջնական հաշվետվություններ: Ներկայացված հաշվետվություններով արձանագրվել են որոշ շեղումներ և անհամապատասխանություններ, մասնավորապես՝ աուդիտի ենթակա միավորների կողմից մասամբ չեն պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին» և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները,

բացի այդ աուդիտի ենթակա միավորների կողմից մասամբ չեն պահպանվել նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ, ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի օգոստոսի 12-ի N 42-Ն հրամաններով սահմանված պահանջները:

Աուդիտի առաջադրանքների իրականացման ընթացքում արձանագրված շտկման ենթակա հնարավոր բոլոր թերությունները և անհամապատասխանությունները շտկվել են, իսկ մնացած թերությունների և անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ներկայացվել է թվով 36 առաջարկություններ: Աուդիտի խմբի կողմից գործողությունների ծրագիր չի սահմանվել, քանի որ հաշվետվությամբ արձանագրված անհամապատասխանությունները և թերությունները հնարավոր է բացառել արդեն իսկ 2025 թվականի գործունեության իրականացման ընթացքում:

Ամփոփելով վերոգրյալը անհրաժեշտ է նշել, որ «ՊՐՈՖ ԱՌԴԴՏ» ՍՊԸ-ի կողմից «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով և Համայնքի հետ կնքված պայմանագրով սահմանված պահանջները իրականացվել են առանց շեղումների:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 69-րդ գլխի 306-րդ կետը, ինչպես նաև Համայնքի ղեկավարի կողմից հաստատված կանոնակարգը, հաշվետվության այս գլխում ներկայացվում է ներքին աուդիտի պահանջմունքները և զարգացման միտումները:

Պահանջմունքներ՝

- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան ներքին աուդիտի ծառայության կողմից կազմվել է ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ինչը ներառում է՝

6. Որակի ծրագիրը՝

- 1) ներառում է ներքին աուդիտորների գործունեության բոլոր ուղղությունները.
- 2) շարունակաբար մոնիթորինգի է ենթարկում ներքին աուդիտորների գործունեության արդյունավետությունը.
- 3) երաշխավորում է համապատասխանությունը ստանդարտներին և վարքագծի կանոններին.
- 4) օգնում է ներքին աուդիտորներին բարելավել Ծառայության գործառնությունները.
- 5) ներառում է ինչպես պարբերական, այնպես էլ շարունակական ներքին գնահատումներ:

7. Որակի ծրագրի շրջանակներում ներքին աուդիտորները իրականացնում են հետևյալ գործառնությունները՝

- 1) ներքին աուդիտի ընթացակարգերի իրականացման նկատմամբ վերահսկում.
- 2) ներքին աուդիտի հետ կապված ռիսկերի մասին գրանցումների վարում, այդ թվում՝ այդ ռիսկերի վրա ազդող նոր տեղեկատվության հավաքագրում, գնահատում և ներառում գրանցումներում.
- 3) ներքին աուդիտի ռազմավարական ծրագրերի կազմման ընդհանուր համակարգի վարում.
- 4) գնահատման և ուսումնասիրման գործառնություններում պարտականությունների բաշխման նկատմամբ վերահսկում.
- 5) արտաքին փորձագետների մասնակցության և ղեկավարների վերապատրաստման ծրագրերի կառավարում.
- 6) աշխատողների ուսուցման/վերապատրաստման աշխատանքների վերահսկում, աշխատանքային առաջխաղացման ծրագրի և կատարողականի գնահատման գործընթացների վերաբերյալ գրանցումների վարման համակարգի ստեղծում և կառավարում.
- 7) աուդիտից հետո կատարվող ուսումնասիրությունների նկատմամբ վերահսկում.
- 8) որակի երաշխավորման և գործընթացների բարելավման աշխատանքների, այդ թվում՝ որակի ներքին գնահատումների դիտարկում (մոնիթորինգ) և կառավարում.

9) տեղեկատվության հավաքագրման, Ծառայության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող ներքին աուդիտորների գործունեության պարբերական ամփոփ հաշվետվությունների (այդ թվում՝ որակի ներքին գնահատումների արդյունքների մասին) կազմման գործընթացի վերահսկում:

10) ներքին և արտաքին աուդիտի, ինչպես նաև գնահատման ու դիտարկման ներքին այլ գործառույթների աշխատանքի արդյունքում ներկայացված առաջարկությունների և միջոցառումների իրականացման մասին համապարփակ տվյալների պահոցի վարում:

11) տեղեկացվածություն ստանդարտներում կատարված փոփոխությունների, ներքին աուդիտի մասնագիտական նորամուծությունների ու փոփոխությունների վերաբերյալ:

8. Որակի ծրագրի իրականացման արդյունքում գնահատվում են գործունեության որակն ու արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտվում են բարելավման հնարավորությունները և ներկայացվում համապատասխան առաջարկություններ որակի բարելավման ուղղությամբ:

9. Որակի երաշխավորման ընդհանուր գործընթացի ժամանակ հայտնաբերված հարցերի արդյունքում որոշվում է, թե արդյոք անհրաժեշտ է՝

1) նորացնել կամ պարզաբանել ներքին աուդիտի ձեռնարկի, կանոնակարգի կամ ներքին աուդիտի ոլորտը կարգավորող այլ ակտերի բովանդակությունը:

2) ուսուցանել կամ վերապատրաստել՝ կատարելագործելով ներքին աուդիտորների աշխատանքին առնչվող գիտելիքները և հմտությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվել են ներքին գնահատումներ, վերլուծություններ, որի արդյունքում կազմվել է որակի երաշխավորման և բարելավման ծրագիր հետագայում ներքին աուդիտի գործառույթները առավել արդյունավետ և օգտավետ կազմակերպելու և իրականացնելու համար, միաժամանակ հավաստիացնում ենք, որ Համայնքի ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միավորներում իրականացված աուդիտորական աշխատանքները համապատասխանում են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին:

Զարգացման միտումներ՝

• Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը՝ Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ կարող են իրականացվել աուդիտի խորհրդատվական ծառայություններ, ինչը բաղկացած է խորհրդատվության, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայությունների մատուցումից, որոնք ուղղված են կազմակերպության ռիսկերի կառավարման և հսկման գործընթացի բարելավմանը:

Լիազոր մարմինն ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ (ծնաչափ)՝

Կազմակերպության անվանումը «ՊՐՈՖ ԱՌԻԴԻՏ» Ս / ՀՎՀՀ 08410295

Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար Զարգանդ Խաչատրյան

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	4		
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	4		
3)	Ներքին աուդիտի ստորաբաժանման տվյալ տարվա աշխատանքների համապատասխանության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 14-ի (համապատասխանում է, մասամբ է համապատասխանում կամ չի համապատասխանում)			

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	3		
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	3		
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը			

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Կազմակերպության միավորների քանակ	17		
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	340		
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	8		

4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	160		
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	8		
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	160		

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդարկական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդարկական ծառայության տեսակները	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Համակարգի գնահատման աուդիտ			
2)	Կադրորդականի աուդիտ			
3)	Ֆինանսական աուդիտ			
4)	Տեղեկարկական տեխնոլոգիաների աուդիտ			
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	8		
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.1)	Գնումների բազային միավորի քանակապարկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով			
6.2)	Գնումների բազային միավորի քանակապարկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝			
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով			
6.3)	Պեղական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝			
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով			
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով			
7)	Խորհրդարկության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում			
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում			
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն			
10)	Այլ, այդ թվում՝			
10.1)				
11)	Ընդամենը	8		

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	8		
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	8		
1.2)	խորհրդարկական ծառայությունների քանակ			
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	8		
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	8		
2.2)	խորհրդարկական ծառայությունների քանակ			

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	43		
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	43		
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ			
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ			
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	43		
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	43		
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը			
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը			
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը			
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	43		
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված			
4.2)	Ինքնուրույն կանխված	43		

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝



Ն.Սիրեկանյան